

և սքանչելեացն Քրիստոսի Աստուծոյն մերոյ» խորագրով. Ղազար քհ. նոյն երգին վերջը իր մասին կը գրէ հետեւեալը.

«մեղապարտ և անարժան փտեալ ի մարմնի  
տէր Ղազար գծողի եմ ստամպօլցի.

ծաղկարար անուանի աշկերտ Յայտինի

այժմուս եմ բնակեալ երուսաղէմի»։ (Նոր Ժողով. Ա. պրակ. էջ 18-22)։ Կ'երևի որ տր Ղազար Ստամպօլցի լոկ ընդօրինակող մը եղած է նոյն երգին՝ Երուսաղէմի մէջ, վասն զի, ինչպէս կը գրէ Ն. Մառ իր նկատողութիւններուն մէջ, վերոգրեալ երգը 1548 ին Յովնասափ Սեքասացիին յօրինած է. (անդ. էջ 26)։

ՂԱՐԻՊՃԱՆ ՇՈՂԻԿԵԱՆ, ԲԱՂԻՇԵՑԻ.— Ի յիշատակ իր վաղամեռիկ որդւոյն մտ. Արշակի՝ Ս. Յակոբի վանքին գետիննեւրէն մէկուն վրայ 1900 ին իր ծախքով կը կառուցանէ անշարժ կալուած մը. (Արձնոր. Տն. ժող. նիստ իր. 1900, էջ 256)։ Իր ննջեցեալներուն համար 1893 ին պատրաստուած է մշակեալ յիշատակարան մը։

ՂԱՓԼԱՆ (անհ.) ԱՏԱՆԱՑԻ, (արծաթագործ).— 1723 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կ'ընդօրինակէ Աւեսարան մը, որուն յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը իր մասին. « . . . Արդ ես նուաստ ոգին ծառայս ծառայիցն այ. և վերջին անշնորհս ի գրչաց մտտի. Ղափլանս յերկրէն Ատանու արհեստիւ արծաթագործ որդի Սարգիս գրագրի հանգուցելոյ ի տէր, նախածանօթ գոլով սրբազան վեհիս (Շղթայակիր), կրկին ցանկացայ երթալ յուխտ և երկրպագութիւն։ Աստուածահուպ ս. տեղեացս, մանաւանդ փափաքելով հասանել տեսութեան բարի համբաւոյն և նորոգաութեան սրբայ աթոռոյս և սրբոյ յարութեանն. ի ՌՃՀԲ (= 1723) ամի թուականիս Հայոց եկի ի սբ. քաղաքս յեմ. և կատարեցի զուխտս իմ, իսկ ի գառնալ կամիլս իմ ի հայրենի գաւառն իմ. ոչ եթող սուրբ հայր մեր այլ հրամայեաց ամաւս մնալ, և ունէր բ. աւետարանցու մագաղաթս, հարկ եղ ի վերայ իմ գրել, որ և գրեցի և ծաղկեցի . . . դարձեալ հարք և եղբարք իմ աղաչեմ զձեզ զի զոսկին և զծաղկունքն յետ բ. ամաց ի քաղաքն ատանա ծաղկեցի զի ի սբ. քաղաքն ոչ կարացի աւարտել զծաղկներն . . . » (ՄՁ. Թ. 64) (Սոպ. Յուց. տետր Զ. էջ 405-7)։ Ղափլան նորոգած